



Արաս Հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231 Kat 1
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 252 65 18 - 243 06 02
www.arasyayincilik.com
info@arasyayincilik.com
Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 311

ՆԱԶՆԱԶԻԿԸ

Գիր եւ գիծ՝
Անահիտ Սարգիսեան

Գոյն եւ ձեւ՝
աղուռը բաներ՝
Վահագն Քէշիշեան եւ Թինա Քոբմա

Խմբագիր՝
Սարին Ագալաչ

Տպագրութիւն՝
Փապրիքա Պասըմ


Նոյեմբեր 2024, Իսթանպուլ

ISBN 9786257460507

Հեղինակին փափաքով, այս շարքէն լոյս տեսած
գիրքերուն մէջ «ամէն» բառը գրուած է «ե»ով:


Տապալակներ

Եւ մեծ մայրիկին
կարի տուփը...




Մեծ մայրիկին կարի տուփը

Նագիկին մեծ մայրիկը՝
Մարգարիտ մայրիկը,
կարի տուփ մը ունի.
ամեն օր,
բայց ո՛չ կիրակի,
արեւածագին կը բացուի՛,
մայրամուտին կը փակուի՛...



Կարի տուփին մէջ
ի՛նչ գանձեր՝
գոյն գոյն թելե՛ր,
Ժապաւէննե՛ր,
հաստ ու բարակ ասեղնե՛ր,
տեսա՛կ տեսակ կոճակնե՛ր...



Մարգարիտ մայրիկը
կը կարէ՛, կը կարկտէ՛,
իսկ Յագիկը
մեծ մայրիկին հանգուցուած՝
ծոցիկը նստած, քարկա՛պ* եղած,
կա՛մ
դերձանը ասեղի ծակէն կ'անցընէ,
կամ ալ
մկրատը ձեռքին,
անհամբեր կը սպասէ,
որ դերձանը չը՛րթ կտրէ...

* Անքակտելի հանգոյց:

Երբ մեծ մայրիկին գլուխը
շահտ դանդաղ,
վեր վար շարժի
ու ժպիտը
մինչեւ ականջներուն հասնի,
կը նշանակէ,
թէ դերձանը չըրթ
կտրելու պահն է...

Մեծ մայրիկը կը ժպտի,
միշտ կը ժպտի...

Մեծ մայրիկը կը կարէ,
միշտ կը կարէ...

Մեծ մայրիկը՝
Ժպիտը երեսին,
միշտ երգելով կը կարէ...

– Կարմիր դերձան ունենայի,
ասեղի ծակէն անցընէի...

Ասեղի ծակէն անցընէի,
իմ Նազիկիս
կարմիր հագուստ կարէի...


Ասեղ, դերձան,
Թե՛յ, Թելակար,
ասեղ, դերձան,
մա՛ս-մաքուր կար...



հանգոյս

Ասեղ, մատնոց, թելակար,
ասեղ, մատնոց, մաքուր կար,
ասեղ, մատնոց եւ մկրատ՝ չըրթ...





Կերպասի խանութը

Մարգարիտ մայրիկը եւ Նազիկը՝
մեծ մայրիկ ու թոռնիկ միասին,
կերպասի խանութ կ'երթան,
շաբաթ օր մը, կէսօրէ ետք ժամը չորսին...

Ի՛նչ կերպասներ՝
բո՛ւրդ, բամպակ,
վո՛ւշ, շղարշ,
մարմաշ ու մետա՛քս...

Ի՛նչ գոյներ,
գոյներու երանգնե՛ր,
ծաղկաւո՛ր, զծաւո՛ր,
սակայն Մարգարիտ մայրիկին փնտռածը՝
կարմիրն է, ա՛յլ կարմիրը...

Մարգարիտ մայրիկը
փնտռածը անշուշտ կը գտնէ,
Մարգարիտ մայրիկը
փնտռածը միշտ կը գտնէ:

Կարմիր վրձն է,
մատներով կը շօշափէ,
հպումին զգացումը հիանալի...
Կը ժպտի,
ապա հարցական՝
Նազիկին կը նայի...
Նազիկը անշուշտ կը համաձայնի:
Մեծ մայրիկին ընտրածը
լաւագոյնն է միշտ:

Վաճառողը
կը մօտենայ շուտով,
Մարգարիտ մայրիկին խնդրանքը
մտիկ կ'ընէ ուշի ուշով
եւ երկն՝ կանգուն* կը չափէ
փայտէ երկա՛ր քանակով:

Մեծ մկրատը կը բռնէ,
«Շնորհաւո՛ր» կը ձայնէ
ու կարմիր վուշ կերպասը
խըրթ, խըրթ կը կտրէ...

* Կանգունը մօտաւորապէս
վաթսունութ սանթիմետր է: